25 YEARS OF DIPLOMATIC RELATIONS BETWEEN JAPAN AND ARMENIA

Ճապոնիայի և Հայաստանի Հանրապետության զարգացմանն ուղղված համագործակցություն

2017

ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանություն

Նախաբան

Ինձ համար մեծ պատիվ և հաճույք է, որ այս տարի մենք նշում ենք Ճապոնիայի և Հայաստանի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 25-ամյակը:

Ճապոնիան բարձր է գնահատում համագործակցությունը և բարեկամական հարաբերությունները Հայաստանի Հանրապետության հետ և խորապես հավատում է, որ համատեղ ջանքերի շնորհիվ մեր երկրները հետագայում կընդլայնեն իրենց փոխգործակցությունը:

Այս ձեռնարկը զգալի տեղեկատվություն է պարունակում քառորդ դարի ընթացքում Ճապոնիայի և Հայաստանի Հանրապետության միջև զարգացմանն ուղղված համագործակցության վերաբերյալ՝ ներկայացնելով ցուցաբերված աջակցության գործիքակազմը, ընդգծելով ներկայիս ներուժը, կատարված աշխատանքները և հետագա զարգացման հեռանկարները:

Ես լիահույս եմ, որ այս ձեռնարկի շնորհիվ Դուք ավելի լիարժեք պատկերացում կկազմեք ճապոնա-հայկական գործընկերության վերաբերյալ, և այն կնպաստի մեր ազգերի միջև առավել սերտ և ամուր համագործակցության կառուցմանը:

Հարգանքով,

Էյջի ՏԱԳՈՒՉԻ

Հայաստանի Հանրապետությում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան

Ընդհանուր տեղեկատվություն

Հայաստանն, որպես Ճապոնիայի գործընկեր Կովկասյան տարածաշրջանում, նշանակալից դեր է կատարում, հանդիսանալով էներգետիկ և լոգիստիկ միջանցք Կենտրոնական Ասիայի և Եվրոպայի միջև, և Ճապոնիայի հետ կիսում է այնպիսի հիմնական արժեքներ, ինչպիսիք են ազատությունը, ժողովրդավարությունը, մարդու հիմնական իրավունքները, օրենքի գերակայությունը, շուկայական տնտեսությունը:

Աջակցման հիմնական քաղաքականություն.
Հավասարակշռված և կայուն տնտեսական աճի ապահովում

Հավասարակշռված և կայուն տնտեսական աճի ապահովման և սոցիալական քաղաքականության զարգացման նպատակով, Ճապոնիայի կողմից տրամադրվող աջակցությունն մասնավորապես ուղղված է այնպիսի ոլորտներին, ինչպիսիք են հաստատությունների և ենթակառուցվածքների բարելավումը, աղետների կանխարգելման միջոցների ձեռնարկումը, ինչպես մայրաքաղաքում, այնպես էլ մարզերում:

Գերակա ոլորտներ

Տնտեսական աճի ապահովմանն ու տարածաշրջանային զարգացմանն ուղղված հաստատությունների և ենթակառուցվածքների բարելավում

Հայաստանում գյուղերի մեծ մասը գտնվում է լեռնային շրջանում, ուստի այդպիսի տարածքների հասանելիությունը դյուրին չէ: Գյուղատնտեսությունը, որպես տարածաշրջանի հիմնական արդյունաբերական ճյուղ, ունի ցածր արտադրողականություն, իսկ գյուղատնտեսությունից բացի ոչ մի այլ խոշոր արդյունաբերական ոլորտ զարգացած չէ: Տարածաշրջանի տնտեսությունը խթանելու նպատակով, Ճապոնիան աջակցում է հիմնական ենթակառուցվածքների պահպանմանը: Բացի այդ, փոքր և միջին ձեռնարկությունների բարելավմանը նպաստելու նպատակով, Ճապոնիան օժանդակություն է տրամադրում նաև մարդկային ռեսուրսների զարգացման գործում:

Աղետների կանխարգելման միջոցների ուժեղացում

Հայաստանն իր ամբողջ տարածքով շրջապատված է լեռներով և գտնվում է երկրաշարժավտանգ գոտում: Այս համատեքստում, Ճապոնիան առաջարկում է իր փորձը և տեխնոլոգիաները աղետների կանխարգելման ոլորտում, ինչպես նաև օժանդակում է մարդկային ռեսուրսների զարգացման գործում՝ նպաստելով աղետների ռիսկի կառավարման կարողությունների բարելավմանը:

Զարգացման պաշտոնական աջակցության (ԶՊԱ) տեսակները

ԶՊԱ ՎԱՐԿԵՐ

Զարգացմանն ուղղված համագործակցության ձև է, որն ենթադրում է ցածր տոկոսադրույքով երկարաժամկետ և արտոնյալ պայմաններով վարկերի տրամադրում՝ տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված նախաձեռնությունների իրականացմանն աջակցելու նպատակով:

ԸՆԴԱՄԵՆԸ *

31,808,000,000 ճապոնական իեն
318,080,000 ԱՄՆ դոլար

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Զարգացմանն ուղղված համագործակցության ձև է, որն ենթադրում է տեխնոլոգիաների փոխանցում զարգացող երկրներին տնտեսական և սոցիալական զարգացման նպատակով:

ԸՆԴԱՄԵՆԸ *

4,012,000,000 ճապոնական իեն
40,120,000 ԱՄՆ դոլար

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Զարգացմանն ուղղված համագործակցության ձև է, որը չի պահանջում ստացող երկրի կողմից մարման որևէ պարտավորություն:

- Մարդկային անվտանգության «Grassroots» դրամաշնորհային ծրագիր
- «Grassroots» մշակութային դրամաշնորհային ծրագիր
- Ընդհանուր դրամաշնորհային ծրագիր
- Մշակութային դրամաշնորհային աջակցություն
- Ոչ-ծրագրային դրամաշնորհային աջակցություն
- Սննդամթերքի արտադրության աճին ուղղված դրամաշնորհային աջակցություն

ԸՆԴԱՄԵՆԸ *

6,942,000,000 ճապոնական իեն
69,420,000 ԱՄՆ դոլար

** Ընդհանուր գումարը մինչև 2015թ.*
1 ԱՄՆ դոլար =100 ճապոնական իեն

Japan International Cooperation Agency

From
the People of Japan

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԶԻՆՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ԶՊԼԱ ՎԱՐԿԵՐ

Երևանի համակցված շոգեգազային ցիկլով էլեկտրակայանի նախագիծ
15,918,000,000 ճապոնական իեն (159,180,000 ԱՄՆ դոլար), 2005

Էլեկտրաէներգիայի փոխանցման և բաշխման ծրագիր
5,399,000,000 ճապոնական իեն (53,990,000 ԱՄՆ դոլար), 1998

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Երևան քաղաքի ճանապարհների տեխնիկական սպասարկման սարքավորումների բարելավման ծրագիր
541,000,000 ճապոնական իեն (5,410,000 ԱՄՆ դոլար), 2002

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՄԲ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱՅՈՒՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ (ԱՅԴ ԹՎՈՒՄ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ) ԽԹԱՆՈՒՄ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«Տեղական արտադրանքի զարգացում և տեղական ապրանքանիշերի առաջմղում» ծրագիր
225,400,000 ճապոնական իեն (2,254,000 ԱՄՆ դոլար), 2013-2016
262,000,000 ճապոնական իեն (2,620,000 ԱՄՆ դոլար), 2016-2019

ՓՄՁ-ների համար մարդկային ռեսուրսների զարգացման ծրագիր
110,000,000 ճապոնական իեն (1,100,000 ԱՄՆ դոլար), 2005-2008

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Աջակցություն գյուղատնտեսական տեխնիկայի և պարարտանյութերի ձեռքբերման համար
2,780,000,000 ճապոնական իեն (27,800,000 ԱՄՆ դոլար), 1997-2009

«Աջակցություն գյուղատնտեսական ցանկապատի, տպագրական թղթի, տրանսպորտային միջոցների ձեռքբերման համար» ոչ-ծրագրային դրամաշնորհային աջակցություն
500,000,000 ճապոնական իեն (5,000,000 ԱՄՆ դոլար), 1997

Կրթական և առողջապահական ծառայությունների բարելավման ծրագիր

Ծրագիրն ուղղված է մարդկային ռեսուրսների զարգացմանը՝մանկաբարձական ծառայության, մասնավորապես վերարտադրողական առողջության և կրթության բարելավման նպատակով: Այն առավել մեծ պահանջարկ ունի գյուղական տարածքներում, որտեղ սոցիալական ծառայությունները ենթակա են զարգացման: Ինչ վերաբերում է կրթական ոլորտին, ապա այստեղ ուշադրությունը մասնավորապես սևեռված է դպրոցական հարմարությունների բարեկարգման վրա:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ «GRASSROOTS» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

Առափի գյուղում ջրահեռացման համակարգի կառուցման ծրագիր
11,400,000 ճապոնական իեն (114,000 ԱՄՆ դոլար), 2017

Արագածոտնի մարզում երեխաների վերականգնողական և խնամքի ծառայությունների որակի բարելավման ծրագիր
4,600,000 ճապոնական իեն (46,000 ԱՄՆ դոլար), 2017

Հայաստանի Հանրապետությունում ականների վտանգի մասին իրազեկմանն ուղղված աջակցության ծրագիր
10,200,000 ճապոնական իեն (102,000 ԱՄՆ դոլար), 2016

Երևանի պետական բժշկական համալսարանի «Հերացի» ավագ դպրոցի վերանորոգման ծրագիր
9,900,000 ճապոնական իեն (99,000 ԱՄՆ դոլար), 2016

Դիտակ գյուղի դպրոցի վերանորոգման ծրագիր
9,700,000 ճապոնական իեն (97,000 ԱՄՆ դոլար), 2015-2016

Ճամբարակ քաղաքում մոր և մանկան առողջությանն ուղղված ծառայությունների բարելավման ծրագիր
9,400,000 ճապոնական իեն (94,000 ԱՄՆ դոլար), 2013

Երևանի թիվ 1 մասնագիտական կրթության և վերապատրաստման ինստիտուտի բարեկարգման ծրագիր
7,223,600 ճապոնական իեն (72,236 ԱՄՆ դոլար), 2013



© ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունում մանկաբարձական ծառայությունների բարելավման ծրագիր
209,000,000 ճապոնական իեն (2,090,000 ԱՄՆ դոլար), 2005

Բժշկական սարքավորումների վերազինման ծրագիր
495,000,000 ճապոնական իեն (4,950,000 ԱՄՆ դոլար), 2001

«Արմենիա» բժշկական կենտրոնի սարքավորումների վերազինման ծրագիր
518,000,000 ճապոնական իեն (5,180,000 ԱՄՆ դոլար), 2000

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Մոր և մանկան առողջությանն / վերականգնողական առողջությանն ուղղված ծրագիր
130,000,000 ճապոնական իեն, (1,300,000 ԱՄՆ դոլար), 2004-2006

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- Հայաստանի հանրային հեռուստատեսության արխիվային ձայնագրությունները թվայնացնելու համար նախատեսված սարքավորումների բարելավման ծրագիր
  137,900,000 ճապոնական իեն (1,379,000 ԱՄՆ դոլար), 2017

- Հայաստանի ազգային պատկերասրահի հավաքածուների վերականգնման համար սարքավորումների վերազինման ծրագիր
  27,900,000 ճապոնական իեն (279,000 ԱՄՆ դոլար), 2009

- Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի համար երաժշտական գործիքների բարելավման ծրագիր
  42,800,000 ճապոնական իեն (428,000 ԱՄՆ դոլար), 2008

- Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի համար ձայնային սարքավորումների տրամադրում
  43,900,000 ճապոնական իեն (439,000 ԱՄՆ դոլար), 2004

- Օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի համար ձայնային սարքավորումների տրամադրում
  28,900,000 ճապոնական իեն (289,000 ԱՄՆ դոլար), 2003

- Հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ՝ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի համար պատմական փաստաթղթերի պահպանման նպատակով սարքավորումների տրամադրում
  49,300,000 ճապոնական իեն (493,000 ԱՄՆ դոլար), 2001
  2,724,144 ճապոնական իեն (27,241.44 ԱՄՆ դոլար), 2008
  / ծրագրի շարունակություն /

- Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի համար երաժշտական գործիքների և ձայնային սարքավորումների տրամադրում
  49,800,000 ճապոնական իեն (498,000 ԱՄՆ դոլար), 1999

«GRASSROOTS» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

- Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանում ճապոներեն լեզվի ուսուցման լսարանի վերազինման ծրագիր
  3,743,640 ճապոնական իեն
  (37,436.40 ԱՄՆ դոլար), 2017

- «Հիկարի» հայ-ճապոնական գիտակրթական և մշակութային կենտրոնի վերանորոգման ծրագիր
  9,666,621 ճապոնական իեն
  (96,666.21 ԱՄՆ դոլար), 2013

- Արմավիրի գյուղական համայնքի երաժշտական դպրոցի վերանորոգման ծրագիր
  9,209,127 ճապոնական իեն
  (92,091.27 ԱՄՆ դոլար), 2009

© Հայաստանի հանրային հեռուստաընկերություն

ԱՂԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԶՈՐԱՑՈՒՄ

Ծրագիրը նպատակաուղղված է աղետների բարձր ռիսկային գոտում բնակվողների համար աղետների կանխարգելման միջոցների ձեռնարկմանը, ինչպես տեխնոլոգիաների և ենթակառուցվածքների վերազինման, այնպես էլ աղետների ռիսկի կառավարման կարողությունների բարձրացմանն ուղղված բնակչության վերապատրաստման միջոցով:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Սողանքային աղետների կառավարման ծրագիր
325,300,000 ճապոնական իեն
(3,253,000 ԱՄՆ դոլար), 2014-2017



«Սեյսմիկ ռիսկի գնահատում և կառավարման պլանավորում» ծրագիր
340,000,000 ճապոնական իեն
(3,400,000 ԱՄՆ դոլար), 2010-2012

Սողանքներից տուժած համայնքների զարգացում
10,696,000 ճապոնական իեն
(106,960 ԱՄՆ դոլար), 2004-2006

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հրշեջ սարքավորումների բարելավման ծրագիր
1,540,000,000 ճապոնական իեն
(15,400,000 ԱՄՆ դոլար), 2017

«Տնտեսական և սոցիալական զարգացման ծրագիր» ոչ-ծրագրային դրամաշնորհային աջակցություն
200,000,000 ճապոնական իեն
(2,000,000 ԱՄՆ դոլար), 2016

Երևան քաղաքում հակահրդեհային սարքավորումների բարելավման ծրագիր
881,000,000 ճապոնական իեն
(8,810,000 ԱՄՆ դոլար), 2009

ՃԱՊՈՆԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ (ՀԲ) ՄԻՋՈՑՈՎ

- Գյուղատնտեսության քաղաքականության մոնիթորինգի և գնահատման կարողությունների զարգացման ծրագիր, որը ֆինանսավորվում է Ճապոնիայի մարդկային ռեսուրսների զարգացման հիմնադրամի ծրագրի շրջանակներում
  200,000,000 ճապոնական իեն (2,000,000 ԱՄՆ դոլար), 2017-2019
- Հայաստանում աղետների ռիսկի կառավարման ազգային ծրագիր
  125,000,000 ճապոնական իեն (1,250,000 ԱՄՆ դոլար), 2015-2017
- Հայաստանում աղքատ և խոցելի անձանց կենսապահովման ու ձայնի զորեղացմանն ուղղված ծրագիր, որը ֆինանսավորվում է Ճապոնիայի սոցիալական զարգացման հիմնադրամի կողմից
  287,000,000 ճապոնական իեն (2,870,000 ԱՄՆ դոլար), 2013-2016

ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ (ԱԶԲ) ՄԻՋՈՑՈՎ

- Հանրային ծառայությունների բարելավման նպատակով Բաց կառավարման գործընկերության շրջանակներում կառավարություն-քաղաքացիական հասարակություն համագործակցության ամրապնդմանն ուղղված ծրագիր, որը ֆինանսավորվում է Աղքատության կրճատման ճապոնական հիմնադրամի կողմից
  100,000,000 ճապոնական իեն (1,000,000 ԱՄՆ դոլար), 2016-2018
- «Հայաստանի հեռավոր և փոքր համայնքներում կոշտ թափոնների կառավարման լուծումներ» ծրագիր, որը ֆինանսավորվում է Աղքատության կրճատման ճապոնական հիմնադրամի կողմից
  55,000,000 ճապոնական իեն (550,000 ԱՄՆ դոլար), 2015-2017

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԾՐԱԳՐԻ (ՄԱԿ ՇՄԾ) ՄԻՋՈՑՈՎ

- «Արևային էներգիան՝ ի նպաստ ածխածնի ցածր արտանետումներով կայուն կենսակերպի՝ Հայաստանի Սոլակ, Այգավան և Մալիշկա համայնքներում» ծրագիր, որը ֆինանսավորվում է 10-ամյա շրջանակային ծրագրի Թրասթ հիմնադրամի միջոցով
  10,000,000 ճապոնական իեն (100,000 ԱՄՆ դոլար), 2017-2018

Վերապատրաստման դասընթացներ

1993 թվականից մինչև 2016 թվականը Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) կողմից կազմակերպվող վերապատրաստման դասընթացներին Հայաստանի Հանրապետությունից մասնակցել է **632** հոգի՝ կառավարման, հանրային ծառայության, գյուղատնտեսության, հանքարդյունաբերության, էներգետիկայի, առևտրի, զբոսաշրջության, մարդկային ռեսուրսների կառավարման, բժշկական ծառայությունների և առողջապահության, սոցիալական ծառայությունների և այլ ոլորտներում:

Մշակութային ուղղվածության դասընթացներ/սեմինարներ

- Թանգարանների և համայնքային զարգացման վերաբերյալ դասընթացներ, **2015-2016**
- Մշակութային զբոսաշրջության զարգացման նպատակով պատմական քաղաքների պահպանման և ռիսկերի կառավարման վերաբերյալ դասընթացներ, **2014**
- Ընդհանուր թանգարանագիտության վերաբերյալ դասընթացներ, **2013**
- Հայաստանի պատմության թանգարանի խնդրանքով մշակութային արժեքների՝ հնագիտական մասունքների և էթնիկ նյութերի, պահպանմանն ու վերականգնմանն ուղղված սեմինարներ՝ (դասախոսություններ և գործնական ուսուցում), **2011-2014**

Արևելյան Ճապոնիայի Մեծ երկրաշարժի և Սպիտակ քաղաքի երկրաշարժի զոհերին նվիրված հիշատակման արարողություն

Արևելյան Ճապոնիայում տեղի ունեցած Մեծ երկրաշարժից 6 տարի անց՝ 2017թ. մարտի 11-ին, Հայաստանի հյուսիսում գտնվող Սպիտակ քաղաքում Արևելյան Ճապոնիայի Մեծ երկրաշարժի զոհերին նվիրված հուշարձանի (խաչքարի) առջև տեղի ունեցավ 1988թ. դեկտեմբերի 7-ի Սպիտակ քաղաքի երկրաշարժի և 2011թ. մարտի 11-ի Արևելյան Ճապոնիայի Մեծ երկրաշարժի զոհերի հիշատակման արարողությունը: Վերջինիս ներկա են գտնվել ՀՀ-ում Ճապոնիայի դեսպան պարոն Էյջի Տագուչին՝ կնոջ հետ, իսկ հայկական կողմից ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար պարոն Դավիթ Տոնոյանը, Լոռու մարզպետ պարոն Արթուր Նալբանդյանը, Սպիտակի քաղաքապետ պարոն Գագիկ Սահակյանը, ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության պետ պարոն Մուշեղ Ղազարյանը, Լոռու մարզի փրկարար ծառայության պետ պարոն Կարեն Հովհաննիսյանը, ինչպես նաև Սպիտակի քաղաքացիները և փրկարար ծառայության աշխատակիցները: Խաչքարին ծաղկեմատույցի արարողությանը մասնակցեցին մոտ 100 հոգի:

Արարողության ժամանակ Սպիտակում մատուցվել է եկեղեցական պատարագ, որից հետո դեսպան Տագուչին իր շնորհակալությունն է հայտնել Հայաստանի կառավարությանը, Հայ առաքելական եկեղեցուն և հայ ժողովրդին Արևելյան Ճապոնիայում տեղի ունեցած երկրաշարժից հետո ցուցաբերած աջակցության համար: Նա նաև շնորհակալություն հայտնեց Սպիտակի քաղաքացիներին ամեն տարի զոհերի հիշատակման արարողություն անցկացնելու համար և նշեց Ճապոնիայի՝ Հայաստանի հետ աղետների կանխարգելման ոլորտում համագործակցությունը զարգացնելու պատրաստակամությունը, քանի որ Հայաստանը նույնպես սեյսմավտանգ երկիր է: Արարողությունից հետո այց կատարվեց Սպիտակ քաղաքի հրշեջ ծառայություն:

Ճապոնիայի կառավարությունը մինչ օրս աջակցություն է ցուցաբերում Հայաստանին աղետների կանխարգելման ոլորտում, այդ թվում JICA-ի ծրագրերի միջոցով: Իր հերթին հայկական կողմից Ճապոնիան ստացել է աջակցություն, այդ թվում պատարագի մատուցում 2011թ. մարտին, որին ներկա է գտնվել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, ինչպես նաև նվիրատվություններ՝ Արևելյան Ճապոնիայում Մեծ երկրաշարժի ժամանակ տուժածների համար:

Հարկ է նշել, որ 1 տարի անց՝ 2012թ. ապրիլին, JICA-ի ծրագրով Ճապոնիա այցելած ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Սպիտակի մասնաճյուղի անձնակազմի նախաձեռնությամբ Սպիտակի երկրաշարժի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանի կողքին կառուցվել է Արևելյան Ճապոնիայի Մեծ երկրաշարժի զոհերի հիշատակին նվիրված հուշարձան:

Ամեն տարի՝ մարտի 11-ին, տեղի բնակիչները անցկացնում են զոհերի ոգեկոչման արարողություն: Հուշարձանի (խաչքարի) վրա ճապոներեն և հայերեն փորագրված են հիշատակման խոսքեր:

Ճապոնիայի Դեսպանություն

Հետադարձ կապ

Փավստոս Բուզանդի փող. 3,
«Ռոյալ Կլասիկ Հաուզ» բնակելի
համալիր և բիզնես կենտրոն,
9-րդ հարկ

+374 60 52 10 30

embjp@yv.mofa.go.jp